

# ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

**Մրցունակությունն այժմ Հայաստանի պետական այրերի, ինչպես նաև հայաստանյան ընկերությունների ղեկավարների առջև ծառայած հիմնական մարտահրավերներից մեկն է:**

Վերջին տասնամյակում Հայաստանում գրանցվել է տնտեսական աճի աննախադեպ բարձր տեմպ: Սակայն այն զգալիորեն կախված է եղել արտաքին գործոններից (դրամական փոխանցումներ, միջազգային ֆինանսական ու նվիրատու կազմակերպությունների օգնություն): Մրցունակության մակարդակից է կախված, թե Հայաստանը կկարողանա արդյոք կայուն ու ներդաշնակ տնտեսական աճ ապահովել այլ գործոնների հաշվին, ինչպիսիք են դրսից եկող դրամական փոխանցումները, օտարերկրյա կազմակերպությունների օժանդակությունը կամ էլ հանքահումքային պաշարների շահագործումը:

**Հայաստանի ներկայիս տնտեսական վիճակը կարելի է բնութագրել որպես «աճ-մրցունակություն պարադոքս»:**

Հայաստանը մակրոտնտեսական չափողականության մեջ գրանցել է բարձր աճի, իսկ մրցունակության մեջ՝ ցածր և հետնապահ տեմպեր: Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից թողարկվող 2007-2008թթ. Մրցունակության համաշխարհային զեկույցում Հայաստանը 131 երկրների շարքում գրավել է 93-րդ տեղը՝ ըստ Համաշխարհային մրցունակության ցուցչի (ՀԱՄ) և 108-րդ տեղը՝ ըստ Գործարար մրցունակության ցուցչի (ԳԱՄ):

Հիմնականում բազային գործոնների հիման վրա մրցակցող երկրների հետ համեմատած Հայաստանը ցուցաբերել է համեմատաբար լավ արդյունքներ առողջապահության, տարրական կրթության, մակրոտնտեսական կայունության, ձեռնարկությունների հիմնադրման, ճկուն աշխատուժի շուկայի հիմնման և գործարարության անվտանգության ապահովման բնագավառներում: Այնուամենայնիվ, այն զիջում է նմանակից երկրներին կարևորագույն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ենթակառուցվածքները, բարձրագույն կրթությունը, ֆինանսական շուկաների արդյունավետությունը, տեխնոլոգիական պատրաստվածությունը, գործարարության կատարելագործվածությունը և նորարարությունները:

**Հայաստանի տնտեսական ձեռքբերումները բավական համեստ են համեմատած ԱՊՀ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԱԵ) և «Եվրասիական խաչմերուկի» տարածաշրջանների երկրների հետ:**

Սույն զեկույցում Հայաստանի տնտեսական կատարողականը չափվել է տարածաշրջանային նմանակից և մրցակից երկրների համեմատությամբ: Երկրների ավանդական ցանկը (ԱՊՀ և ԱԵ) համալրվել է Միջին Արևելքի և միջերկրածովյան շրջանից ընտրված երկրներով, որոնք հիշատակվել են որպես «Եվրասիական խաչմերուկի» երկրներ: Բացի պատմական և մշակութային առնչություններից այս ընտրությունը պայմանավորված է նաև երկրի դիրքավորման հնարավորություններով, ինչը առաջարկվել է ՀԱՄ զեկույցում: Այստեղ Իռլանդիան դիտարկվել է որպես հենամիջ երկիր:

*Բարեկեցություն:* 2000-2006թթ. մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ 12% տարեկան աճի միջին տեմպով Հայաստանը առաջ է անցել համեմատվող բոլոր երկրներից՝ բացի Ադրբեջանից (16%-ից ավել): Հայաստանը, սակայն, բարեկեցության այլ ցուցանիշների գծով բացարձակ մեծությամբ դիտարկման դեպքում լուրջ խնդիրներ ունի: Աշխատավարձերի մակարդակը հասել է 1990թ.-ի մակարդակի միայն 40%-ին, իսկ իրական գործազրկությունը (30%-ից ավել) և աղքատությունը (շուրջ 26% 2006թ.-ին) դեռևս մնում են բարձր մակարդակի վրա:

*Միջազգային ընդգրկում կամ միջազգայնացման մակարդակը:* 2000 թվականից ի վեր Հայաստանի արտահանման մասնաբաժինը համաշխարհային արտահանման ծավալների մեջ ավելի քան կրկնապատկվել է, սակայն բացարձակ արժեքով Հայաստանի արտահանման մասնաբաժինը համաշխարհային արտահանման մեջ չափազանց փոքր է, և այդ ցուցանիշով Հայաստանը հետ է մնում ԱԵ, ԱՊՀ և «Եվրասիական խաչմերուկի» երկրների մեծամասնությունից: Այն ավելի փոքր է, քան Հայաստանի համաշխարհային ՀՆԱ-ի ծավալների մեջ ունեցած մասնաբաժինը: Դա ցույց է տալիս, որ արտահանումը չի հանդիսացել երկրի տնտեսական աճի շարժիչը: Հայաստանի ար-

տահանումը խիստ ռեսուրսափնտեսսիվ է: 2005 թ.-ին ռեսուրսափնտեսսիվ ապրանքների արտահանման բաժինը կազմել է ապրանքների ընդհանուր արտահանման 64%-ը, իսկ 2006թ.-ին աճել և կազմել է 69.5%:

Ընդհանուր առմամբ, վերջին տասնամյակի ընթացքում Հայաստանն ունեցել է ներդրումային միջին կատարողական և բավականին հաջողությամբ է մրցակցել ենթակառուցվածքներում ու ռեսուրսափնտեսսիվ ոլորտներում ՕՈՒՆ ներգրավելու հարցում: 2003-2007թթ. ընթացքում ՕՈՒՆ-ի ներհոսքի տարեկան միջին աճի տեմպը 52.9% էր, որը, սակայն հիմնականում պայմանավորված էր Հայաստանում ստեղծված շահույթի վերաներդրմամբ:

*Գիտելիք, հմտություններ և ստեղծագործականություն:* Անկախությունից ի վեր գիտական հետազոտությունների ու մշակումների (ՀուՄ), ինչպես նաև նորարարության առումներով Հայաստանի կատարողականը հիասթափեցնող էր: ԳիուՏ ներուժի և տնտեսության այլ ճյուղերի ու հասարակության միջև կապը խզված էր, և ԳիուՏ-ը միահյուսված չէր ու չէր դիտարկվում որպես կարևոր գործոն սոցիալական ու տնտեսական զարգացման գործընթացում, նաև ՀուՄ պետական հատկացումներն են շատ չնչին եղել:

*Արտադրողականություն:* Հայաստանը աշխատուժի մասնակցության առումով թույլ կատարողական ունի (59%), որով հետ է մնում իր մրցակից երկրների մեծ մասից: Նման ցածր մակարդակը մասնավորապես 1990-ականների սկզբից մարդկանց լայնածավալ արտագաղթի հետևանքն է: Հայաստանում մեկ աշխատողի հաշվով ընդհանուր արտադրողականությունն զգալիորեն ցածր է Արևելյան Եվրոպայի երկրների ցուցանիշից, սակայն ավելի բարձր է Վրաստանի և Ադրբեջանի նույն ցուցանիշներից: Ըստ պաշտոնական տվյալների՝ Հայաստանի տնտեսության ամենաարտադրողական ճյուղը շինարարությունն է, որին հետևում է հանքարդյունաբերությունը, իսկ ամենամեծ արտադրողականը գյուղատնտեսությունն է:

### **Հայաստանի հիմնական թերությունները միկրոտնտեսական գործարար միջավայրում են:**

Չնայած ընդհանուր մակրոտնտեսական միջավայրը կայուն է և հարաբերականորեն զարգացած, սակայն այստեղ առկա են կարևոր խնդիրներ, ինչպիսիք են հարստության և եկամտի անհավասարաչափ բաշխումը և աճող անհամամասնությունը Երևանի և մարզերի միջև:

2001 թվականից սկսած Հայաստանի կառավարությունը նախաձեռնեց մի շարք բարեփոխումներ, որոնք ներառեցին գործարարության ստուգումների համախմբումը և դրանց թվի կրճատումը, վարչական գործընթացների պարզեցումը, ձեռնարկությունների գրանցման ժամկետի կրճատումը և լիցենզավորման ռեժիմի հստակեցումը: Սա արտացոլվեց Հայաստանի համեմատաբար բարձր դիրքերի ձեռք բերմանը Համաշխարհային բանկի Գործարարության զեկույցում (Doing Business) (39-րդ տեղ) և «Հերիթիջ» հիմնադրամի Տնտեսական ազատականության ցուցիչում (28-րդ տեղ): Այնուամենայնիվ, այս ջանքերը ցույց տվեցին, որ անբավարար են գործարար միջավայրը համաշխարհային առումով մրցունակ դարձնելու համար, ինչը ցույց է տալիս ՀԱՄ-ի ազգային գործարար միջավայրի որակի գծով Հայաստանի ցածր դիրքը (106)՝ նվազելով 17 տեղով նախորդ տարվա համեմատությամբ:

Ֆիզիկական ենթակառուցվածքներում թույլ տեղերն են հեռահաղորդակցության ենթակառուցվածքի զարգացվածության ցածր մակարդակը և ինտերնետի ներթափանցումը, իսկ վարչական ենթակառուցվածքում՝ օրենքների թերի կիրարկումը (104-րդ տեղ ՀԱՄ-ում) և դատական համակարգի անկախության բացակայությունը (120-րդ տեղ ՀԱՄ-ում): Ստահոգիչ մեկ այլ խնդիր է կրթության ընդհանուր որակը և ԳիուՏ ենթակառուցվածքը:

Ֆինանսական հատվածը Հայաստանի տնտեսության ֆինանսավորման գործում խիստ եզրային դերակատարում ունի: Համեմատելի երկրների շարքում ֆինանսական միջնորդության որակը Հայաստանում ամենացածրներից է: Դրա հիմնարար պատճառներից են ՀՆԱ կառուցվածքը, որը շեղված է դեպի ոչ ֆորմալ ոլորտը, անօրինական հարկային արտոնությունները, եկամուտների անհավասարաչափ բաշխումը, ֆինանսական հաստատությունների նկատմամբ վստահության ցածր մակարդակը, ոլորտի միկրոկառավարումը և այլն: Վարկերի տրամադրման ու ավանդների ներգրավման տոկոսադրույքների տարբերությունը և գրավի նկատմամբ պահանջները ամենաբարձրն են անցումային շրջանի երկրների շրջանակում:

Գործարար միջավայրի որակի վրա ընդհանուր առմամբ բացասաբար են ազդել նաև հայկական սպառողների ցածր խստապահանջությունը և ուժեղ քլաստերների բացակայությունը: Կորպորա-

տիվ կառավարման համակարգի ներդրման ցածր մակարդակը և պետական հաստատությունների ոչ թափանցիկ գործունեությունը չեն խրախուսում հայկական ընկերությունների ավելի մրցունակ դառնալուն: Առկա են տեղական շուկայի լուրջ խաթարումներ, որոնք չեն խթանում արդար մրցակցությանը:

Հայկական ընկերությունները մեծ մասամբ հետ են մնում ռազմավարության և կառավարման գործառնության ոլորտներից: Իրավասությունների լիազորման անպատրաստակամությունը, ոչ արդյունավետ գործառնական գործընթացների և տեխնոլոգիաների կիրառումը, մատակարարման միջազգային ցանցերի վրա վերահսկողության բացակայությունը, հմտությունների և մարդուժի զարգացման վրա ոչ բավարար ներդրումները հայկական ընկերությունների առանցքային թերությունների շարքն են դասվում:

**Մենք վստահ ենք, որ Հայաստանը դեռևս զարգացմանն ուղղված քաղաքականության համատեքստ պետք է որդեգրի**

Մենք Հայաստանի պետական քաղաքականության զարգացումը բնորոշել ենք իբրև անցում «գոյատևման համատեքստից»՝ 90-ականների սկզբին «վերաբաշխման համատեքստին»՝ 90-ականների վերջին և վերջապես «սոցիալական կամ աղքատության կրճատման համատեքստին»՝ սկսած 2000թ.-ից առ այսօր: Առաջին փուլը բնութագրվում էր կարծաժամկետ տեսողությամբ, քաղաքականությունների մշակման ու իրագործման թույլ համակարգվածությամբ և ընդհանրական ռազմավարության բացակայությամբ: Կառավարությունը սովորաբար աշխատում էր «ձգձգմանային պայմաններում» և ստիպված էր արագ լուծումներ տալ հրատապ կարծաժամկետ խնդիրներին: Քաղաքականությունը այնուհետև փոփոխվեց վերաբաշխման գործառնության ուղղությամբ, որի ընթացքում բարեփոխումների կիզակետը գույքի մասնավորեցումն էր և ակտիվների զանգվածային վերաբաշխումը ամբողջ երկրով մեկ: Այս ժամանակաշրջանը հատկանշական էր տնտեսական կայունությամբ, էներգամատակարարման վերականգնմամբ և տնտեսության վերակենդանացմամբ: Հազարամյակի սկիզբը առանձնացավ առավել համապարփակ քաղաքականության մոտեցմամբ՝ առաջնայնորեն կենտրոնանալով աղքատության կրճատման վրա, որին նպաստեց տնտեսական անընդհատ աճը: Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ) դարձավ այն հիմնական փաստաթուղթը, որի հիման վրա է կառավարությունը մշակում քաղաքականություն և ծրագրեր: Այն ներմուծեց երկարաժամկետ պլանավորման որոշակի տարրեր, քաղաքականությունների և գործողությունների ավելի լավ համակարգում, նաև բարելավեց ինստիտուցիոնալ (հաստատութենական) կարողությունները:

Հաջորդ փուլում տնտեսական զարգացմանն ուղղված տնտեսական ռազմավարությունը պետք է հասցեագրի այնպիսի հարցեր, ինչպիսիք են Հայաստանի գլոբալ արժեքային առաջարկը, մրցունակության առանցքային խթանիչները, ճյուղային գերակայությունները և այլն:

**Ազգային մրցունակության զեկույցը առաջարկում է մոտեցում, որն առանձնացնում է գործողությունների երկու հարթություն, այն է՝ «ռազմավարական ճեղքում» և «արագ հաղթանակներ»**

«Արագ հաղթանակները» կարճ ժամկետում իրականանալի նպատակներ են՝ ներկայում առկա պաշարների և կարողությունների սահմաններում, իսկ «ռազմավարական ճեղքման» հարթության գործողություններով սահմանվում են գործոններ, որոնք կարող են Հայաստանին այլ երկրների և ուղղակի մրցակիցների նկատմամբ հասցնել մրցունակության հաջորդ մակարդակ:

*Ռազմավարական ճեղքում*

Ռազմավարական դիրքավորումը ենթադրում է երկրի արժեքային առաջարկի սահմանում, որը ներառում է երկրի յուրահատուկ դերը տարածաշրջանային կամ համաշխարհային տնտեսության մեջ:


Տարբեր այլընտրանքների շարքում ՀԱՄ Ձեկույցը դիտարկում է տարածաշրջանային ՀուՄ գործունեության կենտրոն դառնալու հնարավորությունը՝ հիմնվելով յուրահատուկ մարդկային ռեսուրսների զարգացման վրա: Նման դիրքավորման համար պահանջվում է վերասահմանել տարածաշրջանը՝ Հայաստանի դիրքավորման ասպարեզի ընկալման առումով:

Երկրի համբավի ձևավորմանն ուղղված հաղորդակցական ռազմավարության համար «մրցակիցների» վերասահմանումը պետք է դառնա կարևոր օգտագործվող թեմաներից կամ գաղափարներ:

րից մեկը: Մենք ներմուծում ենք «Եվրասիական խաչմերուկ» գաղափարը, որը ներառում է Հարավային Կովկասը, Միջին Արևելքի և Միջերկրածովյան տարածաշրջանի երկրները՝ որպես մեկ այլ գրավիչ հարթակ:

«Եվրասիական խաչմերուկ» գաղափարի վրա հիմնված ռազմավարական դիրքավորումը կօգնի նաև շրջանցել Հայաստանի ընկալումը որպես ցամաքապատ, դեպի ծով ելք չունեցող, նշանակալի բնական պաշարներ չունեցող երկիր: Տարածաշրջանի նման սահմանումը Հայաստանին հնարավորություն է ընձեռում առաջատար տեղեր գրավելու մի շարք ընտրված ոլորտներում, որոնք պահանջում են բարձրորակ մարդկային կարողություններ, կապերի համաշխարհային ցանցեր ու հաստատված ավանդույթներ ԳիուՏ բնագավառում:

Ռազմավարական ճեղքման հասնելու և միջազգայնորեն մրցունակ մի քանի ճյուղերի ստեղծման համար որպես մոտեցում առաջարկվում է լծակների համակարգ: Այն բաղկացած է լինելու հենակետերից և լծակներից, ինչպես ներկայացված է ստորև.



Հենակետերի ձևավորման համար կենտրոնական դերը կատարում է քլաստերների ձևավորման կամ զարգացման նախաձեռնությունները կամ քաղաքականությունը: Այն կանվանենք **քաղաքականության կորիզ** կամ՝ **կապող օղակ**: Քլաստերների միջազգայնորեն մրցունակ դառնալու ներուժով քլաստերների ձևավորման, ինչու չէ՞ նաև զարգացման, նախաձեռնությունները կօժանդակվեն նորարարության ու տարածաշրջանային զարգացման քաղաքականություններով, որոնց կարելի է անվանել **համալիրող քաղաքականություններ**: Այս քաղաքականությունների համակցված ու միասնականացված կիրառմամբ կարելի է արդյունավետ ու նպաստավոր հենք ստեղծել լծակների կիրառման համար:

Քաղաքականության այս համատեքստում առանձնացվել են երեք կարևոր գործոններ որպես լծակներ, որոնք կարող են օգտագործվել իրական ճեղքման հասնելու համար.

- (1) տեխնոլոգիատար ՕՈՒՆ-ներ – խիստ առաջնայնություն պետք է տրվի միջին և բարձր տեխնոլոգիական անդրազգային կորպորացիաների գլոբալ արժեքային շղթայի ընտրված տարրերի ներգրավմանը:
- (2) Սփյուռքի գործարար ցանցեր – արդյունավետ համագործակցությունը կարելի է կառուցել «կենտրոն-շառավիղ» (կամ «սոնակալ-անվաճաղ», hub-and-spoke) մոդելի վրա:
- (3) բարձրակարգ կրթական համակարգ – տարրական կրթության բարձր չափանիշներ և բարձրագույն կրթության մասնագիտացում՝ ելնելով քլաստերների զարգացման առաջնահերթություններից:

### Արագ հաղթանակներ

Մշակվել է հատուկ վերլուծական գործիք («առաջնահերթությունների գտիչ»)՝ կարճ ժամկետի համար առաջնահերթ խնդիրները բացահայտելու և հետևյալ «արագ հաղթանակները» ընտրելու նպատակով:

<b>Ֆինանսական հատվածի աշխուժացում</b>	<ol style="list-style-type: none"> <li>1. Վարկերի մատչելիության դյուրինացում և բանկերի վարկավորման գործունեության ընդլայնում</li> <li>2. Ավանդների և վարկավորման տոկոսադրույքների միջև տարբերության կրճատում</li> </ol>
<b>Գործարար միջավայրում ընտրված տարրերի բարելավում</b>	<ol style="list-style-type: none"> <li>3. Մրցակցության պաշտպանության (կամ հակամենաշնորհային) քաղաքականության արդյունավետության բարձրացում</li> <li>4. Հարկային քաղաքականության բարելավում (հարկային խթանների ստեղծում, հարկային բեռի նվազեցում, մաքսային ընթացակարգերի բարելավում, աշխատուժի վրա կատարվող ոչ աշխատավարձային ծախսեր)</li> <li>5. Առաջնահերթ ճյուղերում ՕՈՒՆ-ի ներգրավման համար խթանների կիրառում</li> </ol>
<b>Տեխնոլոգիաների օգտագործման խրախուսում</b>	<ol style="list-style-type: none"> <li>6. Բջջային հեռախոսների օգտագործման լայն տարածում</li> <li>7. Անհատական համակարգիչների օգտագործման խրախուսում</li> <li>8. Ինտերնետի օգտագործման խրախուսում</li> <li>9. ՏՀՏ-ների կիրառումը խրախուսող օրենսդրություն</li> <li>10. Տեխնոլոգիատար ապրանքների գնում պետության կողմից</li> </ol>

Մրցունակ տնտեսության ձևավորման համար Հայաստանը դեռևս երկար ճանապարհ ունի անցնելու: Հաջորդ փուլում պահանջվում է ունենալ ջանքերի ավելի մեծ կենտրոնացվածություն, ավելի բարձր ունակություններ (հմտություններ), մեծ հավակնություններ և տեսլականով առաջնորդվող առաջնորդներ: